


ՀՏԴ: 929:809.198.1-187 Կատվայան

DOI: 10.54503/0135-0536-2026.1-246

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ. Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս. պրակ Ա, Գեղարքունիքի մարզ, Երևան, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի էլեկտրոնային հրատ., 2025, 325 էջ\*:

*Քանայի բառեր՝ բարբառային միավորներ, Գեղարքունիքի մարզ, զուգաբանություններ, բարբառագիտական ատլաս, քարտեզ, բարբառային հատկանիշներ, լեզվաբանական աշխարհագրություն:*

Լեզվի պատմության ուսումնասիրության համար առանձնակի կարևորություն ունի բարբառների փոխառնչությունների գիտական քննությունը: Թեև հայերենի բարբառների ուսումնասիրության փորձերը սկսվել են XIX դարի կեսերից, և այդ ժամանակից ի վեր դրանք ենթարկվել են ինչպես միահատկանիշ, այնպես էլ բազմահատկանիշ դասակարգումների, այնուամենայնիվ բարբառային միավորների միջև գոյություն ունեցող բարդ փոխհարաբերությունների պարզաբանումը, հստակեցումն ու ճշգրտումը մինչ օրս շարունակում են մնալ չլուծված խնդիրներ:



Բարբառագիտական հարցերի համակողմանի քննությունը հնարավոր է միայն բարբառագիտական ատլասի առկայության պայմաններում, որի ստեղծումը նշանակալից երևույթ է ցանկացած լեզվի ուսումնասիրության պատմության մեջ: Վաղուց կազմ-

ված են շատ լեզուների բարբառագիտական ատլասներ: Հայերենի քննությունը այդ բնագավառում բավականին հետ է մնացել, և լեզվաբանական աշխարհագրությունը՝ որպես հետազոտական մի մեթոդ, որի օգնությամբ կարելի է ուսումնասիրել լեզվական երևույթների տարածական բաշխման օրինաչափությունները, ուշ է սկսել կիրառվել հայագիտության մեջ: Այս առումով խիստ կարևորվում է բանասիրական գիտությունների դոկտոր Վիկտոր Կատվայանի «Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս» էլեկտրոնային գրքի առաջին պրակը՝ նվիրված Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներին: Այն ամբողջական, մեթոդապես համակարգված ուսումնասիրություն է՝ հիմնված 2013–2015 թթ. դաշտային հետազոտությունների արդյունքների վրա: Գրքում ներկայացված են մարզի բնակավայրերի խոսվածքների բարբառային հատկանիշները՝ հնչյունական և քերականական մակարդակներում, ինչպես նաև դրանց տարածական ու ժողովրդագրական տվյալները:

\* Ներկայացվել է 18. II. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

Աշխատությունն ունի ներածական մաս, որում Վ. Կատվայանը ներկայացնում է հայ իրականության մեջ լեզվաբանական աշխարհագրության ուղղությամբ կատարված աշխատանքները: Խոսելով լեզվաբանական աշխարհագրության մեթոդի մասին՝ նա նկատում է, որ դրա «... էությունը բարբառագիտական ատլասների ձևավորումն է և դրանցում ընդգրկված քարտեզներում իրենց բաշխման ու դրսևորումների յուրահատկություններով ներկայացված հատկանիշների նկարագրությունն ու մեկնաբանումը» (էջ 5):

Անդրադառնալով հայերենի բարբառագիտական ատլասի ստեղծման ուղղությամբ արված քայլերին՝ հեղինակը նշում է, որ բարբառագիտական քարտեզ կազմելու առաջին փորձը կատարել է Հ. Աճառյանը, որի համար հեռավոր երազանք է եղել ատլասի կազմումը: Նա, սակայն, կազմել է «Հայոց խոսած լեզուներու ու բարբառներու քարտեսը»: Այն ներկայացնում է 337 հայաբնակ վայր, որոնց ճյուղային պատկանելությունը ցույց է տրվում պայմանական նշանների օգնությամբ<sup>1</sup>:

Ըստ Վ. Կատվայանի՝ հայ բարբառների տեղային քարտեզ կազմելու առաջին փորձը Ռ. Բաղրամյանի «Դերսիմի բարբառային քարտեզը» աշխատությունն է: Այն ներկայացնում է Դերսիմի շրջանում գործածված բարբառային միավորների (Խարբերդ-Երզնկա, Չմշկածագ, Չարսանճագ, Քղի, Միրաքներ) ընդհանուր, իսկ առանձին դեպքերում՝ նաև համեմատական բնութագրերը, բարբառային նմուշներ ու բարբառային բառերի բառարան: Գրքում զետեղված երեք քարտեզները վերաբերում են պայթական բաղաձայնների համակարգին, բայի սահմանական ներկայի և անկատարի, ինչպես նաև շարունակական ներկայի կազմություններին: Քարտեզներն ուղեկցվում են համառոտ մեկնաբանություններով<sup>2</sup>:

Վ. Կատվայանն անդրադառնում է նաև Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատությանը, որում, ըստ նրա, հեղինակը կատարել է Լեռնային Ղարաբաղի տարածքում գործածվող խոսվածքների հնչյունական ու ձևաբանական իրողությունների համակարգված քարտեզագրական քննություն՝ համաժամանակյա դիտանկյունից: Նա կազմել է լեզվական առանձին հատկանիշների տարածական բաշխվածությունն արտացոլող 53 քարտեզ, որոնցից ութը զետեղված է աշխատության մեջ<sup>3</sup>: Թեև տվյալ ուսումնասիրությունը բնութագրվել է միայն որպես առանձին տեղային խոսվածքների նկարագրության մի փորձ, այնուամենայնիվ, ըստ Վ. Կատվայանի, այն ներկայացնում է հայ բարբառագիտության մեջ տարածական լեզվաբանական վերլուծության մեթոդաբանական կարևոր քայլ. «Կարծում ենք, որ նման աշխատանքների շարունակական և համակարգված իրականացումը կարող էր հայերենի բարբառագիտական ատլասի համապատասխան հատվածի մշակման նախադրյալներ ստեղծել» (էջ 4):

<sup>1</sup> Հ. Ա ճ ա ռ ե ա ն. Հայ բարբառագիտություն. – «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Ը, Մոսկուա–Նոր-Նախիջեան, 1911, էջ 14:

<sup>2</sup> Ռ. Բ ա ղ Ր ա մ յ ա ն. Դերսիմի բարբառային քարտեզը, Երևան, 1960, էջ 105–107:

<sup>3</sup> Կ. Դ ա վ թ յ ա ն. Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 296, 504:

Հայ իրականության մեջ, ըստ Վ. Կատվայանի, լեզվաբանական աշխարհագրությանն ու քարտեզագրությանը առնչվող հիմնարար ուսումնասիրություններ սկսվել են 1970-ական թվականներից, երբ Գ. Ջահուկյանն առաջ քաշեց և կիրառեց հայ բարբառների դասակարգման բազմահատկանիշ-վիճակագրական մեթոդը. «Թեև նրա ուշադրության կենտրոնում բարբառային հատկանիշներն էին և դրանց տարածական դրսևորումներն ու բաշխվածությունը, ինչն առերևույթ մեթոդաբանական առնչություն էր ստեղծում լեզվաբանական աշխարհագրության հետ, այնուամենայնիվ վիճակագրական բարբառագիտության հիմնական նպատակը բարբառային միավորների առանձնացումը, խմբավորումն ու դասակարգումն էր՝ վիճակագրական հաշվումների կիրառմամբ: Վերջինս իրականացվում էր աղյուսակների կազմմամբ և բարբառային ընդհանրությունների ու տարբերությունների թվային արտահայտմամբ» (էջ 5):

Վ. Կատվայանի կարծիքով՝ նոր մեթոդի առաջընթացմամբ լեզվաբանական աշխարհագրությունը ոչ թե մղվում էր երկրորդ պլան, այլ, ընդհակառակը, ստանում էր լրացուցիչ արժևորում: Հայ իրականության մեջ առաջին անգամ Լեզվի ինստիտուտի կողմից ձեռնարկվեցին նպատակաուղղված նախապատրաստական քայլեր՝ բարբառագիտական ատլասի ձևավորման ուղղությամբ: Դրանց արդյունքում 1977 թ. հրատարակվեց «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիրը», մշակվեցին նյութերի հավաքման սկզբունքներ, և սկսվեց տվյալների հավաքագրումը: Սակայն ներկայումս աշխատանքները դադարեցված են, և քարտեզներ չեն կազմվել:

Ներկայացնելով «Հայոց լեզվի բարբառագիտական ատլասի» ստեղծման նախապատրաստական աշխատանքները և նախադրյալները՝ Վ. Կատվայանը կարծում է, որ «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով» գրանցված ծավալուն նյութը, ինչպես նաև ատլասի ստեղծման ուղղությամբ իրականացված նախապատրաստական աշխատանքներն ու մշակված մեթոդաբանական սկզբունքները բավարար հիմք էին՝ անհրաժեշտ ռեսուրսների և համապատասխան հնարավորությունների առկայության դեպքում ձեռնամուխ լինելու համահայկական բարբառագիտական ատլասի կազմմանը» (էջ 6):

Գործընթացի սկզբնական փուլում հեղինակը նպատակահարմար է համարում նախ մշակել Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների բարբառագիտական առանձին ատլասներ՝ շարունակական դարձնելով դրանց համալրումն ու ընդլայնումը նոր տվյալներով, որոնք կնպաստեն համահայկական ատլասի աշխատանքները փուլային կարգով իրականացնելուն:

Ատլասի Ա պրակը, ինչպես ասվել է, նվիրված է Գեղարքունիքի մարզին: Այս պրակում զուգաբանությունները ձևակերպվել են՝ նկատի ունենալով «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» աշխատությունում ներկայացված բարբառային հատկանիշները: Ընդգրկվել են նաև այն զուգաբանությունները, որոնք ընդհանուր տարածում ունեն Արցախի և հարևան շրջանների բարբառային հայերենում և բնորոշ են Ճամբարակի ու Վարդենիսի տարածաշրջանների բարբառային խոսքին:

Ատլասը ներառում է 2 ընդհանուր և 65 զուգաբանական քարտեզներ, որոնք ընդգրկում են շուրջ հինսուն բնակավայր: Առաջին ընդհանուր քարտեզում տարբեր գույն ունեցող կետերով սահմանազատված են մարզի տարածաշրջանները՝ Սևանի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի, Ճամբարակի: Երկրորդ ընդհանուր քարտեզում նույնպես կիրառված են տարբեր գույնի կետեր՝ մարզում գործածվող բարբառային միավորների (Մշո, Բայազետի, Դիադինի, Ղարաբաղի բարբառներ, Գանձակի միջբարբառ, Մակուի և Արծափի խոսվածքներ) տարածման գոտիները ներկայացնելու նպատակով: Սա հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ վարչատարածքային սահմանները չեն համընկնում բարբառային սահմանների հետ, և նույն տարածաշրջանում գործածվում են մեկից ավելի բարբառային միավորներ:

Քարտեզներից յուրաքանչյուրում սովորաբար ներկայացվում է մեկ զուգաբանություն, որը կարող է ունենալ տարբերակային դրսևորումներ: Տարբերակների առկայության դեպքում յուրաքանչյուրի համար սահմանվում են կետերի տարբեր գունավորումներ, որոնցով նշվում են այն բնակավայրերը, որտեղ առկա է տվյալ հատկանիշը: Հատկանիշի լիարժեք առկայությունը ցուցադրվում է ամբողջական կետով, իսկ մասնակի դրսևորումը՝ կիսված կետով: Մի շարք դեպքերում նույն քարտեզում ներկայացվում են համանման և զուգահեռ զուգաբանություններ, առավել ընդհանուր իրողության տարաբնույթ դրսևորումներ, որևէ զուգաբանություն ու դրան առնչվող հարակից հատկանիշ, որևէ զուգաբանություն ու իբրև դրա առկայության հետևանք դրսևորվող հատկանիշ և այլն:

Ատլասի՝ զուգաբանությունները ներկայացնող քարտեզները ուղեկցվում են հայերեն և անգլերեն մեկնաբանություններով: Դրանք սկսվում են զուգաբանության կարճ, երբեմն գրեթե բանաձևային ներկայացմամբ, այնուհետև բերվում են օրինակներ Գեղարքունիքի մարզի խոսվածքներից: Եթե առկա են տարբերակային իրողություններ, ներկայացվում են նաև դրանք: Այնուհետև նշվում է տվյալ հատկանիշի դրսևորումների ընդհանուր պատկերը բարբառային հայերենում, ապա՝ արտահայտությունը Գեղարքունիքի մարզում՝ ըստ տարածքային շրջանների և բնակավայրերի: Անհրաժեշտության դեպքում տրվում են երևույթին վերաբերող բացատրություններ: Վերջում ներկայացվում են զուգաբանության կամ դրա տարբերակային դրսևորումների առնչությունները մարզի բարբառային միավորների հետ:

Ատլասը համալրված է նաև ժողովրդագրական տեղեկություններով՝ ներկայացնելով մարզի յուրաքանչյուր բնակավայրի բնակչության թվաքանակը և բարբառային միավորների տարածական ընդգրկումը: Առանձին աղյուսակում զուգաբանությունների և դրանց տարբերակային դրսևորումների համարակալմամբ ներկայացվում է բնակավայրերին բնորոշ հատկանիշների խումբը, ինչը ոչ միայն ամբողջացնում է տվյալ խոսվածքի պատկերը, այլև դյուրին է դարձնում խոսվածքների համեմատական դիտարկումը:

Ատլասը եզրափակվում է մարզում գործածվող բարբառային միավորների ընդհանուր բնութագրերով և դրսևորումներով, ինչպես նաև զուգաբանությունների և քարտեզների ցանկով:

Գիրքն անկասկած նոր խոսք է բարբառագիտական ատլասի կազմման ճանապարհին և հատկանշվում է մի շարք առավելություններով՝

– համակարգված և մեթոդապես հիմնավորված դաշտային տվյալներ՝ բնակավայրերի մակարդակով,

– բազմակողմանի ներկայացված բարբառային հատկանիշներ,

– զուգաբանությունների և քարտեզների կիրառմամբ տարածքային ու համեմատական վերլուծության հնարավորություն,

– բարձր գիտական արժեք՝ մասնավոր և եզակի երևույթների արձանագրմամբ,

– նախադրյալների ստեղծում համահայկական բարբառագիտական ատլասի շարունակականության համար:

«Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս» աշխատանքը կարևոր ներդրում է հայերենի բարբառների ուսումնասիրության ոլորտում և կարող է ծառայել որպես օրինակ՝ այլ մարզերի ատլասների ստեղծման ժամանակակից մեթոդների մշակման համար: Այն կարևորվում է հայ բարբառների վերաբերյալ իր մատուցած նյութով, արժեքավոր դիտարկումներով՝ նպաստելով հայ բարբառագիտության, հայոց լեզվի պատմության շատ հարցերի պարզաբանմանը: Ատլասի օգնությամբ ճշտվել են Գեղարքունիքի մարզի բարբառային միավորների փոխհարաբերությունները, բացահայտվել են բարբառային կարևոր հատկանիշների ընդհանրություններն ու տարբերությունները: Այն, գիտական շրջանառության մեջ դնելով նոր տվյալներ, եզակի փաստեր, կնպաստի հայերենի բարբառների ուսումնասիրությանը, հնարավորություն կտա պարզելու բարբառախոս վայրերի պատմական ընդհանրությունները, ավելի ստույգ ու ճշգրիտ մեկնաբանելու լեզվական փոխազդեցություններն ու իրակությունները:

Լեզվաբանական նշանակությունից բացի՝ ատլասն ունի նաև պատմական և մշակութային արժեք: Նրա օգնությամբ հնարավոր կլինի լուսաբանել ոչ միայն բանասիրական, լեզվաբանական, այլև պատմագիտական, ազգագրական ու բազմաթիվ այլ հարցեր:

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*Բ. գ. դ., պրոֆեսոր, Ռուս-հայկական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, հայ բարբառագիտություն, հայոց լեզվի պատմություն, հայերենը որպես օտար լեզու: Հեղինակ է 12 գրքի և 81 հոդվածի: ORCID: 0000-0002-7828-8695. gevgayane@gmail.com*